



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Նր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 25

Տր. 15  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԵԿ Է  
Չեռագիր էս չ'դարձուիր

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6  
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

# Փիիկնիկ

Կը ծախուի ՄԷԿ դրուս տղջի

ՇԱԲԱՐԱՐԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 22

### ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը դիմենք յանուն և ի պատիւ հայ մամուլին ու կը խնդրենք որ վերջապէս հաճին վճարել իրենց բաժանորդագրինք, որ, չնչին գումար մը, պիտի ապահովէ սակայն թերթիս շարունակութիւնը: Ո՛վ որ բարեկամ է թերթիս, թո՛ղ այս դիմումին վրայ փութացնէ զրկել իր պարտքը: Միայն խմբագրին կամ գրաշարին հիւանդութիւնը չէ՛ որ կը խանգարէ թերթին կանոնաւոր հրատարակութիւնը, ուրիշ հիւանդութիւն մը կայ, մե՛ծ հիւանդութիւնը, որուն գարմանը կախում ունի բաժանորդներուն խղճմանըէն:

Ա՛լ ի՞նչպէս կրնանք հասկցնել նիւթական տագնապնիս:

Նախընթաց թիւով հրատարակուած մեր այս դիմումն ալ ազարդիւն մնաց, և, հակառակ 20 օրէ աւելի տեսող սիրահասուններու, զուր սպասումներու, չը վճարող բաժանորդները

պատասխան մ'անդամ չը զրկեցին մեր զրկուած մասնաւոր նամակներուն: Հետեւաբար, առանց վերապահումի, իրաւունք ունենալ կը կարծենք այսուհետեւ վարուիլ այդպիսիներու հետ այնպէս ինչպէս որ արժանի է:

Որոշած ենք ուրեմն սպասել դեռ մինչև յառաջիկայ Յունվար 15 ու եթէ այդ մեր յարգելի բաժանները գարձեալ անվճար թողուն, իրենց բաժանորդագրութեան պարտքը, հրատարակել զիրենք յանուանէ, որով կը յուսանք թէ ծառայութիւն մ'ալ մատուցած կ'ըլլանք մեր մամուլի եզրայրակիցներուն, զգուշացնելով իրեն թերթերը զրկելէ ճրիակներնրու:

Եղան ճրիակներնեք ալ, սոյնք, տարիու կէս շարունակ ստանալէ ետքը մերժեցին թերթս, և իրենց այդ անձունի մերժումը կարծեցին արդարացնել իմաստակի պատրուակներով:

Առ այժմ իբր նմոյշ դնենք հոս այս կարգի նամակներէն մին, որ մեզի զրկուած է Մանչեսթրի Ա. Մ. Ժամկոչեան եւ Ընկ. Կոզմէն, թէ և անըստորագիր:

«Մանչեսթըր 20 Սեպտ. 1902

Տիար Ժամկոչեան այսօր Ձեզ կը դարձնէ ձեր թերթի վերջի 3 թիւերը: Ինք երբէք բաժանորդ գրուած չէ ձեզ, որ բաժանորդագիրն վճարելու պարտականութիւն չգայ, և քանիցս մերժած է թերթը, բայց զիտնալու էք որ անգղիական փոսթան մերժուած թերթերը ետ չդարձնեք, հապա կը ջնջէ:»

Իսկ իրաւունք չունիք թերթ զրկելու ու է հասցէի և յետոյ սպասելու որ դրամը վճարուի: Բնաւ իրաւունք չունիք ինքնաբերաբար ձեր զբոյն կամ թերթերուն հասցէներուն անպատիւ խօսքեր ուղղելու՝ եթէ դրամ չեն վճարեր: Ձեր թերթը տեղական խնդիրներով զբաղելուն համար կրնայ օգտակար ըլլալ եղիպտահայոց, բայց չ'չահադրգուեր արտասահմանի հայերը, և այս տողերը կ'դրենք թէ և պարտական չենք, որպէս զի գիտնաք թէ

1. Մերժուած թերթերը ետ չեն դարձուիր ձեզ:

2. Երբ մեկը բաժանորդ գրուած չէ, իրաւունք չկայ անկէ դրամ սպասելու:

3. Երբ մեկը թերթը կստանայ եւ դրամը կանխիկ չի վճարեր, ինքզինքն իր բաժանորդ չնկատեր, եւ հարկ է թերթին առաջումը դարձնել:

4. Հայ հասարակութիւնը պարտական չէ անխօսի ամէն թերթի բաժանորդագրուիլ:»

Ո՞ր ցածը, ո՞ր ապուշը պիտի համարձակէր ստորագրութիւնը դնել ա՛յսքան հակասական ու ա՛յսքան անպատկառ գրութեան մը ներքեւ: Սակայն ցաւալին այն է որ Տիար Ժամկոչեան եւ ընկ. անդեղով թուղթը ձեռքերնիս է:

(\*) Տիար Ա. Շալիեանի կողմէն Փիւնիկի ընդհ. բաժանորդներուն ուղղեալ մեկ յօդուածին կ'ակնարկէ:

Սակայն, այս ախուր էջը փակելէ առաջ, չ'ենք կրնար հոս հրապարակաւ չ'արտայայտել խմբագրութեանս գունդնակութեան զգացումները հանդէպ ազնիւ բաժանորդներուն, որոնք, իրենց կանխիկ ու կանոնաւոր վճարումներով, դիւրացուցած են մեր գործը. և արդէն այս կարգի պարտաճանաչ ու բարեկամ ընթերցողներու կը պարտի թերթս իր ցարդ շարունակութիւնը. դժբաղդաբար, ասոնց թիւը հազիւ մէկ երջորդը կը կազմէ Փիւնիկի բաժանորդներուն ամբողջութեանը: Իսկ, մնացեալ երկու երջորդը, մօտ 300, չ'եմ գիտեր ի՞նչ մտածումով, կը շարունակեն իրենց բաժանորդագրութիւնը, առանց սակայն վայրկեան մ'իսկ խորհելու թէ՛ միայն թղթատարութեան համար 1500 ֆրանգէ աւելի ծախք մ'եղած է իրենց համար, չը հաշուելով թղթի ու տպագրութեան ծախքերը:

Կը յուսանք թէ այս դառն կացութեան վերջ մը կը տրուի շուտով, և խմբագրութիւնս, խրախուսուած իր Պատ. Ընթերցողներուն աջակցութենէն ու գործնական համակրանքէն, պիտի ջանայ ո՛չ միայն կանոնաւորութեամբ, այլ և աւելի՛ մեծ ծաւալով շարունակել Փիւնիկի հրատարակութիւնը, ճոխացնելով զայն նիւթերու շահեկանութեամբն ու զանազանութեամբը:

**ՈՒՐ ԵՆՔ**

Կրթութիւնը կ'ընէ ամենը. այն է առաջ աղբիւրը կարգին, հանգրսիս ու երջանկութեան:

ՎՕԼԹԵՌ

Բովանդակ ԺԸ. դարը լեցուց ՎՕԼԹԵՆ, ծաղրեց, ձողկեց, յուսահատեցուց դարուն խմաստակները, կատղեցուց մեծերը, տապալեց մեծ ու պզտիկ կուսքերը կեղծիքին, խարազանեց սեղանաւորները հաւատքին ու արքայութեան, Բանին տաճարէն արտաքսեց դպիրները, որոնք ք շահագործէին

Մ. Խ.

տղիտութիւնն ընկերութեան ու անոր թը-  
ուստութեան վրայ կը հիմնէին իրենց բաղ-  
դին կատոյցը : Ու այդ յեղաշրջումը բերող  
Մեծ Խորհողը անէ՛ք, որքա՛ն մեծ հաւատք  
ունի կրթութեան վրայ, ու ի՛նչ առատ բա-  
րեքներ կը սպասէ անկէ :

Այո՛, կրթութիւնը կ'ընկե ամենք. միշտ,  
ամեն տեղ ու ամենուն կողմէն պէտք է ըն-  
դունուած ըլլայ այս վճիռը . թո՛ղ գաղափար  
առնէ կրթութիւնը, շուտով կը խլրաի վայ-  
րենութիւնը. կրթութիւնն է որ սանձած  
է շատ մը վտանգաւոր բնազդները մար-  
դուն, որոնք ամեն վայրկեան կրնան հա-  
կահարուած մը տալ արշաւող յառաջգի-  
մութեան :

Անհատի մը, ընտանիքի մը կամ ազգի  
մը բարօրութիւնը պէտք է փնտոել այդ  
ընտանիքին կամ ազգին անդամներուն ստա-  
ցած կրթութեանը չափին մէջ, քանի՛ շատ-  
նայ թիւը զարգացածներուն, ա՛յնքան կը  
քիչնայ թիւը թշուառներուն. մեծ թշուա-  
ռը տգէ՛տն է, որ իր ապրած միջավայրին  
պահանջները չը գիտեր . որ իր բաղդին  
յանձնուած, կ'երթայ իր ճամբան, չը ծառա-  
յելով ո՛րեւէ նպատակի, ու չ'ունենալով  
կեանքի ո՛րեւէ ծրագիր : Ամեն դարու, ա-  
մեն ազգի իմաստասէրները մէ՛կ բերան  
վկայած են թէ՛ կրթութիւնը միակ, էական  
ու կենսական պայմանն է ընկերային կար-  
գին պահպանմանն ու անոր բարգաւաճ-  
մանը, հետեւաբար աւելորդ է ծանրանալ  
արդէն խօսուած, պրուած, սպացուցուած եւ  
ընդունուած ճշմարտութեան մը վրայ :

Ու երբ հոս, ամեն օր, մեր աչքին  
առջեւ կը ցցուի պատկանելի, այսինքն ա-  
մթալի թիւ մը խեղճ, տգէտ ու անկիրթ  
երիտասարդներու, որոնք հրապարակը կը  
վիտան, իրարու հետ կը մըցին ասոր անոր  
ցեխոտած կօշիկները ներկելու համար.  
Երիտասարդներ, որոնք չարչարուող հայրե-  
նիքին յոյսն ու ծաղիկները պիտի ըլլային,  
բայց որոնք, այսօր, գուրկ ամենատարբա-  
կան կրթութեանէ, մեր ազգային վէրքը ճա-  
կատնին, փողոցները կը քաշկոտեն դոյու-  
թիւններու ամենէն դձուճը :

Ո՛ւր ենք :

Այսքա՛ն ազտոտ, ա՛յսքան նպատաւոր  
միջավայր ո՛ւր պիտի կրնայինք գտնել.  
ամեն ազատութիւն կը վայելինք, յառաջ-  
դիմելու, զարգանալու, ապագայ պատրաս-  
տելու, անհատապէս թէ հաւաքապէս լա-  
ւազոյն գիրքի մը տիրանալու միջոցներն

ու պայմանները կ'ընծայէ այս միջավայրը՝  
հոս ո՛չ բռնաբարուժը կայ Քուրտին, ո՛չ  
կեղեքուժը հարկահանին. ո՛չ հետապնդուժը  
լրտեսին, ո՛չ անակնկալը ձերբակալման,  
ո՛չ խաղքութիւնը գրաքննութեան, ո՛չ ար-  
գելքը հրատարակութեան :

Ուրեմն ինչո՞ւ մեր անդգայ ու անհող  
եսին մէջ քաշուած ապրինք, ինչո՞ւ չ'ու-  
նենանք կեդրոնավայր մը, ուր, մեր պարա-  
պոյ ժամերուն մէջ, հաւաքուինք, խօսակ-  
ցինք, լուսաւորուինք. ինչո՞ւ օր առաջ չը  
բացուի Լսարան-Բնութեցատունը, ինչո՞ւ  
ժամ առաջ չը հաստատուի գիշերային դա-  
սընթացք մը մեր խեղճ անուս երիտասար-  
դութեան համար : Ո՛ւր ենք, ո՞ւր :

Դեռ առբի մը չ'անցաւ, Աղեքսանդ-  
րիոյ գրեթէ ամբողջ հասարակութիւնը  
ուրք ելաւ Թաղ. Խորհուրդին ընտրութիւն-  
ները սահմանադրապէս կատարելու համար.  
Նոյն հասարակութիւնը մէկէ աւելի ան-  
գամներ Միքիկներ կաղմեց իր կամքը  
բարձրաճայն արտայայտելու համար. դեռ  
անցեալները նոյն հասարակութիւնը, Տի-  
բացուի մը քանանայացման դէմ ու շուրջը  
հանեց անազին աղմուկ :

Ո՛ւր ենք հիմակ : Մի՞թէ այդ բոլոր  
չարժումը, այդ բոլոր իրարանցումը, այդ  
բոլոր ոգեւորութիւնը, այդ բոլոր աղա-  
ղակները մեքենակա՞ն էին. մի՞թէ գիտակ-  
ցութիւնը չէ՞ր որ կ'աւազնորդէր. մի՞թէ  
կոյր ամբոխին ալեկոծութիւնն էր մի-  
այն . . . :

Ո՛ւր ենք, ո՞ւր են անոնք, այն տղ-  
նուսխոն եւ օրինապաշտ ախոյեանները, ու-  
րոնք ինքզինքնին կրակի ու ծովի մէջ նե-  
տելու պատրաստ եղան մէ՛կ քառի կամ մէ՛կ  
տասի համար :

Ո՛չ, չը խաբէ՛նք գիրար, ու չը խա-  
բուէ՛նք. մեր մէջ կը պակսի եռանդը գոր-  
ծելու հանրային օգտին համար :

Ահա՛ «Տիգրան Երկաթ Միուքիւն»ը,  
Մայիսէն ի վեր կազմուած ու մինչեւ այս  
օր չը յաջողեցաւ բանալ փոքրիկ Լսարան-  
Բնութեցատուն մը, ուր հասարակութեան  
անդամները հաւաքուէին, կարգային զանա-  
զան թերթեր ու գիրքեր, գիրար ճանչնա-  
լին, իրարմով եւ իրարու համար ապրէին :

Ուրախութեամբ իմացանք թէ նոյն  
Միութեան վարչութիւնը՝ գաղափարը չդա-  
ցած է ձեռնարկելու հանգանակութեան մը,  
որմէ գոյանալիք գումարը պիտի յատկա-  
ցուի անմիջապէս բացմանը Լսարան-Բն-  
ութեցատան մը :

Կոչում կ'ընենք հրապարակաւ, մեր  
ամեն գաստիարգի ազգայիններուն պարտա-  
ճանաչութեանը. թո՛ղ չը խնայեն իրենց  
ինկամ բաժինը ձգել յօժարութեամբ Մի-  
ութեան Գանձանակը, ուր հաւաքուած լու-  
մաներով պիտի պտորաստենք մե՛ր ապա-  
գան ու պիտի մե՛նք ալ պարծենանք օր մը  
մեր ազգային կրթական հաստատութիւննե-  
րով ու մանաւանդ մեր զարդացած երէտա-  
սարգութեամբը:

**Պ. ԱԼՊԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԻՒԾԸ**

Խօստացած էինք տալ մանրա-  
մասնութիւնը գեղեցիկ նուագահան-  
դէսին, զոր համակրելին Պ. Արամ Ալ-  
պան սարքած էր Նոյ. 29ին Մօնթե-  
րաթօի սրահին մէջ, անձնուէր աջակ-  
ցութեամբ Տիկիւն Տ. Գալեանէր Մ. Բէշ-  
տիմալճեանի և ուրիշ օտարազգի ար-  
ուեստագէտներու, որոնց անունները  
նշանակած էինք նախընթաց թիւին  
մէջ:

Սրահը գրեթէ լեցուն էր, մեծ  
մասով մերազնեայ ընտանիքներէն,  
որոնք եկած էին այն շաբաթ իրիկունը,  
քաջալերելու հայ արգիստը:

Օր. Ս. ԳՕՆԷՅԼԻԱՆՅՕ ձայնական  
երաժշտութեան մէջ իր վարանոտ նա-  
խաքայն ըրաւ յանկուցիչ շնորհովն ու  
արծաթի ձայնին հեշտալի թրթռումնե-  
րովը, ուժգին—թէև տարօրինակօրէն  
կրկնուած— ծափեր խլելով. պահ մը  
փորձուեցանք կարծել թէ՛ Բայէ սր  
գրիստալի երգչուհիի մը դիմաց կը  
դանուէինք. չ'եմ գիտեր թէ՛ այդ ծա-  
փերու ջերմեռանդութենէն, չ'ըսելու  
համար մոլութենէն բռնուող պարոն-  
ները կամ պարոնուհիները գիտէին  
արգեօք թէ այդ իրիկուն սրահը՝  
Սրբավայրի մը չափ վեհ՝ պէտք էր  
մինչև վերջը պահէր իր լըջութիւնը,  
փոխանակ գետինը թնդալու ոտքերու  
հարուածներէն ու ձեղունը սարսելու

պի՛ս, պի՛ս, պի՛ս ի օրոտումներէն...:  
Ինծի անհասկնալի բան մըն ալ արգիս-  
տի հովեր առնող չեմ գիտեր օրիորդի  
մը թէ տիկնոջ մը խնդալէն մարիլը,  
կարծես ըսել ուզելու համար թէ՛ այն  
պահուն բեմին վրայ երգող տրգիստը  
կամ նուագածուն խոշոր սխալ մը կը  
գործէր: Ու աւելի զուարճալին՝ այդ  
անձանօթ արդիստին կուշտը յցուող  
ատամնատ պառաւուկի մը կեղծուկ ծի-  
ծաղը, թերևս հաճոյք մ'ընելու հա-  
մար էր քովի մանկամարդուհիին...:

Պ. ԱՐԱՄ ԱԼՊԱՆ, ողբացեալ ազ-  
գային ուսուցիչ Մկրտիչ Անաւուտ-  
եանի որդին, անհասկնալի ածեց  
չուլթալը, օտարազգի դաշնակահարի  
մը հետ զուգընթացօրէն ու իր վարպե-  
տին հիացում ազգելու աստիճան ճար-  
տարութիւն ցոյց տալով բոլոր եղա-  
նակներուն, մանաւանդ Սոխակին մէջ:

Տիկիւն Տ. ԳԱԼԷՆՏԷՐ Մ. ԲԷՇՏԻ-  
ՄԱԼՃԵԱՆ— որ, հակառակ իր անձնա-  
կան տկարութեան, հայրենակից ար-  
գիստի մ'երեկոյթը փառաւորելու մի-  
ակ փափագովը մշուած, բերած դրած  
էր իր շնորհալի ու անձնուէր աջակ-  
ցութիւնը — Ա. Մասին մէջ Մէյէր-  
պիտի «Ռօպէռօ իշ Տիալօջօն», առանց  
իր օտարութիւնը մատնելու, բաւական  
յաջողակ արտասանութեամբ երգեց,  
երբեմն ընդհատուելով ծափերէ, որոնք  
ինչպէս գիտել տուինք, անտանելիօ-  
րէն կրկնուեցան, իսկ երբ ազնիւ Տիկի-  
նը բեմ ելաւ երկրորդ անգամ ու Բ.  
Մասին վերջակէտը դնելու համար  
սկսաւ տրտմանուչօրէն երգել անմահ  
Պէշիկթաշլեանին «Ռ'ի ի՛նչ անուշը»,  
բուն իր դերին մէջ գտանք զանի. նա-  
հատակ Հայաստանի աղէխարչ հառա-  
չանքը լսել զգացինք անոր թրթռուն  
ձայնին նուազումներուն մէջ. իրա՛ւ  
հոգեվար հայրենիքն էր որ կը հեծեծէր.  
պահ մը սարսուղեցիկ, խորհրդակիր  
լռութիւն մը տիրեց սրահին մէջ ու  
այդ սուրբ սարսուղը սրտերնիս՝ մեկ-



փոխառութիւն ընելով յարչիութիւն  
կ'ընէ և աննախանձելի վիճակ ունի:

Պրն. Նիկ. Խաչատուրեանը որ մը  
Ն. Վեհ. Մէնէլիքի ուրախ տրամադ-  
րութեան ժամանակ, ծնրադիր և բազ-  
կատարած լալով և պաղատելով կ'ա-  
զաչէ որ կայսրը ճամբու մը ծախք տայ  
իւր 2րդ որդին, որ հիւանդութենէ  
բուժուած է, Եւրոպա խրկելու համար:  
Կայսրը 100 ոսկի կը շնորհէ, բայց  
ձիպուղիի դատարկաշրջիկ որդին Մըս-  
տըրը Զաւէնը հօրը համոզելով ինքը  
կ'երթայ Եւրոպա, անշուշտ զբօսնելու  
համար, փոխանակ իր հիւանդ եղբայ-  
րը խրկելու:

Պարոն խմբագիր (?) Արշալոյս  
Թերթի. Զեյ խորհուրդ կուտամ որ  
ուրիշ անգամ «Աղգայիս շուրեր» վեր-  
նագրի տակ այդպէս ռէֆրաններ չի  
տպագրէք, ըէքլամներ որ տրուած են  
ձեզ (անշուշտ քանի՛ փայլուն ոսկինե-  
րով) վերոյիշեալ երկու ճամբորդնե-  
րէն: Արովհետեւ տեղւոյս գործերի ան-  
յաջողութեան անձանօթ և միամիտ  
հայ եղբայրներ, յափշտակուած ձեր  
պատմած ոսկերչայտէի, մասախարա-  
պէի, Կայսեր ծայրայեղ վասախո-  
թիւնը գրաւած պասգամաւորների դէպ-  
քէն, կուգան այս տեղ և խեղճ կը  
մնան, ինչպէս որ քանի մը հատներ  
կան: Անշուշտ դուք կը սիրէք յուսալ  
և տեսնել մեր աղգայինք այդպէս յա-  
ջողութեան մէջ, բայց ափսոս որ  
այդպէս Չի:

Ա.

### Ք Ր Ո Ն Ի Կ

— ՄԱԿԵԿՈՆԻՈՅ ՄԷՁ. Լուր կար  
թէ քանի մը գեսպաններ գիտողու-  
թիւններ ըրած են Մակեդոնիոյ մէջ  
գործադրելի վարչական վերանորո-  
գումներուն վերաբերող հրամանագիր-  
ներուն գէմ. հիմայ կը հերքուի այդ  
լուրը: Իրաւ է որ քանի մը գեսպան-

ներ, ի Բ. Գուռն իրենց սովորական  
այցելութեան առիթովը, աննպաստ-  
օրէն դատած են այդ վերանորոգում-  
ները, բայց ու է պաշտօնական դի-  
մում չ'են ըրած մինչև ցարդ:

— Կեդր. Գօմիթէին պետերը  
բացարձակօրէն կը յայտարարեն թէ  
խսպառ կը մերժեն Թուրքիայէն ծա-  
նուցուած վերանորոգումները Մակե-  
դոնիոյ մէջ ու կընդունին միայն Պեր-  
լինի Դաշնագրին 23րդ յօդուածով  
հաստատուածները: Այդ պետերը կ'ազ-  
գարարեն թէ Մակեդոնիան պիտի չա-  
րունակ յուզեն մինչև որ Եւրոպական  
տէրութիւնները հարկադրեն Թուր-  
քիան յիշեալ վերանորոգումները գոր-  
ծադրելու:

— Մակեդոնական Գօմիթէին հաշ-  
ուին՝ ատենէ մ'ի վեր զէնքերու մե-  
ծաքանակ գնումներ եղած են Անգ-  
լիոյ մէջ. կ'ըսուի նաև թէ փոքրաթիւ  
լեռան թնդանօթներ ալ մտցուած են  
Մանասթրի նահանգը, ուր ձիւները  
տեղալէն ի վեր, օսմանեան կանոնա-  
ւոր զօրքերը չ'են կրնար առաջուան  
չափ հսկել սահմանազուխները:

— Նոր ընդհարումներ տեղի ու-  
նեցան Թուրք զօրքերուն ու ապս-  
տամբներուն միջև: Պուլղար հրոսա-  
խումբ մը Պօպրէչչէ գիւղը կոխեց ու  
գրաւեց. մուխրարը կրցաւ փախչիլ,  
շոկատ մը հետեակ զօրք հետը բերաւ  
ու յարձակեցաւ ապստամբներուն վը-  
րայ, որոնք, զօրքերէն պաշարուած,  
տան մը մէջ ամրացան: Կուր կատա-  
ղի եղաւ. վեց ապստամբներ սպան-  
ուեցան, ուրիշ շատեր այրուեցան տա-  
նը մէջ, որ Թուրքերէն կրակի տը-  
րուած էր. հրոսախումբին մնացորդը  
փախաւ ազատեցաւ: Թուրքերը մեծ  
կորուստ ունեցան, մուխթարը կուրին  
մէջ սպաննուեցաւ:

— Աւրիշ պուլղար հրոսախումբ  
մը, 39 մարդերէ բաղկացած, Պալ-  
դելու գիւղին մօտերը յարձակում կը-

րեց թուրք հետեակ զօրագնդէ մը: Կռուէն լուր մը չը կայ, յայտնի է միայն թէ 39 պուլզարները ջարդուած են:

— Զօրավար Զօնչէֆի վէրքը բուրովին բուժուեցաւ, բայց ինք աքսորուեցաւ Նիքօլով գնդապետին հետ, սրովհետեւ երկուքն ալ Պուլզարիայէն դուրս ելած էին սուանց արտօնութեան:

— ՏԱՐՏԱՆԵԼԻ ՄԷՁ. Անգլիական թերթերը վերջերս նորէն սկսան յարձակողական յօդուածներով բողոքել այն արտօնութեան դէմ որ Իրան կողմէն Ռուսիոյ տրուեցաւ, ճարտանելէն քանի մը մարտանաւեր անցընելու համար:

Նեղուցներուն հարցը սեղանի վերայ նորէն բերել գնելու այս նոր փորձը կուգայ անգամ մ'ալ ապացուցանել թէ՛ Անգլիան, հարաւափրիկեան մզձաւանջէն ազատած, նորէն սկսաւ բարձր խօսիլ, սպառնալ ու միջամտել ուղեւ միջազգային քաղաքականութեան բոլոր հարցերուն մէջ: Կամ ուրիշ կերպով ըսենք, Անգլիան հիմայ ինքզինք աւելի հզօր կը զգայ Ռուսիոյ դէմ գնելու և ռուսական ըզձանքներուն դէմ արձակ համարձակ կռուելու:

Անգլեռուսական հակընդդիմութիւնն է որ երեւան կուգայ նորէն ու պիտի շուտով ստանայ աւելի սուր հանդամանք մը: Իրանագիտական աշխարհը կը պատրաստուի ուշի ուշով դիտել դարձուածքը, զոր կ'առնէ այս յայտնի մարտնչումը ճարտանելի հարցին վրայ ու աչք բանալ Վոսփորի վերայ:

— ՄՍԿԵԴՈՆԱԿՍՆ ՀԱՐՑՆ ՈՒ ՌՈՒՍԻԱՆ. Կաշրուքեան Սուրհանդակը Ս. Բեթրսպուրկէն, ամսուս 14 ին պաշտօնական զեկոյց մը հրատարակեց, որով Պալզաններուն մէջ կացութիւնը խիստ կնճռատ կը նկատէ:

Իրա՛ւ է որ, կ'ըսէ զեկոյցը, Մակեդոնիոյ մէջ խմորումը պիտի ծաւալ չը գտնէ հիմակուհիմայ, բայց յառաջիկայ դարնան, գօմիթէներուն ձեռքով ընդհանուր ապստամբութիւն մ'անխուսափելի է: Ռուսիան չը կրնար անտարբեր մնալ իր ցեղակից ժողովուրդներուն բազդին ու արգէն ազդու դիմումներ ըրաւ Իրան արգիլել տալու որ պալզանեան թերակղզիին ամեն կողմերը չը տարածուին խռովութիւնները, որոնք օրինական պատճառ մը պիտի հայթայթեն թուրք կառավարութեան բուռն միջոցներ ձեռք առնելու համար իր ապստամբած հպատակներուն դէմ, և, հետեաբար, վարչական վերանորոգումներուն գործադրութիւնն ու պաշտօնեաներուն կեղծքումներուն դէմ բնակչութեան պաշտպանութիւնը պիտի դժուարանան: Ռուսական ծանուցագիրը կը շարունակէ գրեթէ հետեւեալ իմաստով:

«Յաջողութեան առաջին ու գլխաւոր պայմանն է նախ դադարեցընել յուզումը մակեդոնական գօմիթէներուն, որոնք չը հասան իրենց հետապնդած նպատակին, այլ բնակչութեան խաղաղիկ աշխատանքը կեցընելով, զայն տարին ձգեցին աղիտաբեր ձամբու մը մէջ:

Ռուսական կառավարութիւնը միշտ դատապարտած է իր սլաւ ժողովուրդներուն կողմէն փորձուած ամեն բանի միջոցները, որոնք միջազգային կարգապահութիւններով պալզանեան թերակղզիին մէջ երաշխաւորուած կացութիւնը փոխելու նպատակն ունեցած են: Ու միեւնոյն զգացումով է որ Սերպիոյ ու Պուլկարիոյ կառավարութեանց նորէն խրատ կուտայ, իրենց սեփական շահուն համար, զսպելու այսպիսի վտանգաւոր գրգռում մը, ջանալով վերահաստատել անգործութիւնը: Ռուսիան անխախտ է իր բողոքութեանը մէջ առաջին առնելու համար ամեն կնճիռներուն. եւ իր այս որոշութիւնն ամենուն քով ընդունելութիւն գտած է:

Կը մնայ հիմայ աւստրօնուսապարական կառավարութեան՝ յանձնարարել Կ. Պոլսոյ իր ներկայացուցիչներուն որ ընկերակցին ռուսական դեսպանին, իրարու հետ այս մա-

սին կարծիքներ փոխանակելէ յետոյ, ազգու-  
գիծումներ ընեն Դրան ու ցոյց տան Մա-  
կեղանիոյ մէջ անմիջական վերանորոգութե-  
անքաւ գործադրութեան անհրաժեշտ պէտքը:

Առեւելքի մէջ խաղաղութեան պահ-  
պանման հարցովը վերադանցորէն շահա-  
գրողուող այս երկու դրացի պետութիւն-  
ներն իրենց միացեալ ջանքերով 1897 ի  
համաձայնութիւնները գործադրած պիտի ըլ-  
լան, որոնք սակայն պիտի չը տան ո՛ր եւ է  
բարեբար արդիւնք կամ գործնական իրա-  
կանացում, մինչև որ կէտ աւ կէտ նկատի  
չ'առնուին անոց հիմը կազմող սկզբունք-  
ները այն է, ընդգիծադրել պայգաններուն  
մէջ գաշնագիրներով հաստատուած իրերու  
վիճակին սմին կամայական ձեւափոխու-  
թեան. պահպանել բարեկարգութիւնը, որ  
նարկաւոր բարիք մըն է քրիստոնեայ բնակ-  
չութեանց համար. վերջապէս, պահպանել  
ընդհանուր խաղաղութիւնը:»

Ռուսական ծանուցագիրը կը վեր-  
ջանայ կոչ մ'ուղղելով Սուլթանին որ  
պիտի գիտնայ գնահատել Ռուսիոյ  
բարեկամական դիմումներուն կարեւ-  
րութիւնն ու ձեռք առնել հարկաւոր  
միջոցներ, զսպելու համար ամեն բու-  
ռըն արարք ու հանգարութիւնն աւ-  
պահովել Մակեդոնիոյ քրիստոնեայ  
բնակչութեանց:

— ԳՍՏ ՈՒ ՊԱՏՈՒՅՑ ԱՏԵԱՆ.  
Տիար Նաչարէք Աղազարեան, Գահի-  
րէի Առաջնորդ արանին Դիւանագետը,  
գառ է բացեր մեր Եղիշէ Թորոսեա-  
նին դէմ:

— Տիար Յ. Օհանեան պատուոյ  
ատենն պահանջած է Տիար Երուանդ  
Օտեանէն, վերջերս Ազգաւ Խօսքի մէջ  
երկեցած հրատարակութեան առիթովը:

— ԲՃՇԿԱԿԱՆ Ա. ԳՕՆԿՐԷՆ Ե-  
զիպտոտի մայրաքաղաքին մէջ ամսոյս  
18ին բացուեցաւ, խորվական Օրէքային  
մէջ: Բժշկական աշխարհին ներկայա-  
ցուցիչները, մեծ թիւով ամեն կողմե-  
րէն եկած էին մասնակցելու Իօնկրէ-  
ին, որուն մանրամասնութիւնները պի-  
տի տանք յաջորդ թիւով:

— ՀԱՅ ՀԱՆԳԷՍԻ վերջին թիւին  
մէջ Սուրբաբի ռաժը վերնագրով աղ-  
տոտ յօդուածը տեսանք. կը սպասենք  
նաև կարգալ Տիար Արիփարեանի  
տեսութիւններն ու կարծիքները, նոյն  
յօդուածին նկատմամբ:

ԱԶԻՆՔ

ՐԱՄԻՉԻ ՀԱՅՆԵՐՈՒՆ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՃԱՆԱՐԱՆ, ուր կը պատ-  
րաստուին զանազան արևելեան կերա-  
կուրներ, խիստ չափաւոր գիններով:  
Նորեկ ու անցորդ ճամբարներու կը  
հայթայթուի ամեն կերպ գիւրութիւն:

9. R. Buffault, 9.

près Faubourg Montmartre, Paris

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին կա-  
րեւոր մասերուն ամփոփումը, հայերէնի  
թարգմանուած, գեղեցիկ հատոր մը,  
157 էջերով, հեղինակին պատկերով  
ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ.  
Տօնապետեան: Գինն է 3 ֆրանկ:

Գիմել:

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London.W.

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագետ  
է, պատրաստ է մասնաւոր գասերտալ անգ-  
լերէնի, ուսնելու մէջ ալ, խիստ զմացու-  
ցիչ եւ գիւրամատչելի պայմաններով:

Փոփազողները գիմեն Փիլեթիլի խմբա-  
գրութեան: